12453

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար

Համբարձում Մաթևոսյան

«10» 11 2025թ.

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՈՒԹՅԱՆ

**ԲՓ № 259-25**

***Նախաձեռնող՝*** **«ՎԱՅՔԻ ՃՇՇ» ՓԲԸ**
*գ. Զառիթափ 23 փողոց, 2-րդ շենք*

***Գործունեությունը՝*** **Հերհերի անդեզիտաբազալտների երևակման տեղամասի երկրաբանական ուսումնասիրություն**
*Վայոց ձորի մարզ*

***Առդիր՝ 4 թերթ***

17.11.

**ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ**

**ԲՓ № 259-25**

**« 10 » 11 2025թ.**

**Վայոց ձորի մարզի Հերհերի անդեզիտաբազալտների երևակման տեղամասի երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն**

| | |
|---|---|
| Նախաձեռնող՝ | «ՎԱՅՔԻ ՃՇՇ» ՓԲԸ |
| Ներկայացված նյութեր՝ | Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն /«Բ» կատեգորիա/ |
| Գտնվելու վայրը՝ | Վայոց ձորի մարզ, Վայք համայնք |

***Ներածական մաս.*** Վայոց ձորի մարզի Հերհերի անդեզիտաբազալտների երևակման տեղամասի երկրաբանական ուսումնասիրության հայցվող տեղամասում «ՎԱՅՔԻ ՃՇՇ» ՓԲԸ-ն նախատեսում է իրականացնել օգտակար հանածոյի երկրաբանական, հետախուզական աշխատանքներ՝ խճի և ավազի որակական ցուցանիշների որոշման նպատակով:

Նախատեսվող գործունեությունը, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի՝ 12-րդ հոդվածի 4-րդ մասի 2)-րդ կետի «ա» ենթակետի, դասակարգվում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկին:

***Նկարագրական մաս.*** Վայոց ձորի մարզի Հերհերի անդեզիտաբազալտների երևակման տարածքը գտնվում է Վայոց ձորի մարզի Վայք համայնքի վարչական շրջանում՝ Վայք քաղաքից 6.5 կմ հյուսիս-արևելք, Արին բնակավայրից 5.2 կմ հարավ արևելք: Գորհայք-Սարավան-Վայք միջպետական ավտոմայրուղուն միանում է մոտ 5 կմ գրունտե ճանապարհով: Հայցվող տարածքը գտնվում է Արփա և Հերհեր գետերի ջրբաժանի շրջանում (հեռավորությունները հայցվող տարածքի եզրագծից կազմում են Արփա գետից 817 մ, Հերհերի ջրամբար՝ 400 մ): Հայցվող տեղամասը զբաղեցնում է 6,81 հա մակերես: Երևակման տեղամասը հանդիսանում է Վայոց ձորի մարզի Վայք համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 10-022-0294-0008, 10-022-0294-0009, և 10-009-0111-0078 ծածկագրերով հողամասերի տարածքում, ընդ որում՝ 10-022-0294-0008 և 10-009-0111-0078 ծածկագրով հողամասերը վարձակալության իրավունքով տրամադրված է «ՎԱՅՔԻ ՃՇՇ» ՓԲԸ-ին: Ռելիեֆի բնականոն իրադրությունը խախտված է նախկինում կատարված արդյունահանման աշխատանքներով պայմանավերված (հումքն օգտագործվել է Հերհերի ջրամբարը կառուցելու նպատակով): Տեղամասի հետախուզումը նախատեսվում է իրականացնել մեխանիկական սյունակային ուղղահայաց հորատմամբ: Ըստ երկրաբանական բարդության՝ անդեզիտաբազալտների մարմինը պատկանում է երկրորդ խմբի 2-րդ տիպին: Արդյունաբերական կարգերով պաշարների եզրագծման համար հետախուզագծերի վրա հորատանցքերի միջև հեռավորությունը B կարգի պաշարների եզրագծման համար ընդունված է 100-200 մ: Հետախուզական աշխատանքները նախատեսվում է իրականացնել երեք հետախուզագծերով, որոնց միջև հեռավորությունը ստացվում է 145-175 մ, ինչը հնարավորություն է տալիս օգտակար հանածոյի պաշարը լիարժեք գնահատել B կարգով: Նախատեսվում է հորատել 7 հորատանցք՝ յուրաքանչյուրը մինչև 15 գծ.մ ծավալով: Բոլոր յոթ հորատանցքերի

ընդհանուր խորությունը կլինի մոտ 105 գծ.մ: Բոլոր հորատանցքերը, մերկացումները, հորատման հարթակները և ճանապարհները գործիքի օգնությամբ տեղադրվելու են տեղագրական քարտեզի վրա: Օգտակար հանածոյի մարմինը նախատեսվում է ուսումնասիրել հորատանցքերով: Հորատման աշխատանքները նախատեսվում է իրականացնել սյունակային հորատումով ուղղահայաց տեղադիրքով: Հորատումը կատարվելու է 112 մմ տրամագծով կարծր համաձուլվածքի թագիկով: Անհրաժեշտ է ապահովել հանուկի առնվազն 90% ելք: Բոլոր հորատանցքերը պետք է նմուշարկել: Նմուշարկումն անհրաժեշտ է կատարել տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2021 թվականի օգոստոսի 11-ի N 06-Ն հրամանի N 3 հավելվածի հրահանգի պահանջների պահպանմամբ: Հումքի որակը ստուգելու համար նախատեսվում է հորատահանուկից վերցնել 21 նմուշ՝ յուրաքանչյուր հորատանցքից երեքական նմուշ: Բոլոր նմուշները կենթարկվեն ֆիզիկամեխանիկական փորձարկումների: Մինչև երևակման տեղամասը ճանապարհների կառուցում չի նախատեսվում, քանի որ դրանք առկա են: Հորատման հարթակներին հասնելու և հորատման հաստոցը տեղադրելու համար նախատեսվում է տեղամասում կառուցել մոտ 220 գծ.մ ճանապարհ: Նախատեսվում է կառուցել նաև 6 հորատման հարթակ՝ յուրաքանչյուրը 24 քմ մակերեսով՝ հորատանցք 7-ի համար հորատման հարթակի կառուցման անհրաժեշտություն չկա քանի որ ռելիեֆը հարթ է: Ճանապարհների և հորատման հարթակների կառուցման ժամանակ IV-րդ և V-րդ կարգի գրունտներում նախատեսվում է կատարել մոտ 900 խմ (ճանապարհ՝ 700 խմ, հորատման հարթակ՝ 200 խմ) հողային աշխատանք:

Տարածքի ծայրակետերի կոորդինատները ARMWGS-84 միասնական համակարգով հետևյալն են՝

1. X=8547154.5472 Y=4396819.0781,
2. X=8547069.9742 Y=4397007.2250,
3. X=8547219.5288 Y=4397104.1644,
4. X=8547359.5001 Y=4397130.2230,
5. X=8547438.9693 Y=4397020.1649,
6. X=8547325.8647 Y=4396889.3683,

Համաձայն հաշվետվության տեղեկատվության՝ ուսումնասիրվող և հարակից տարածքներում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակներ չեն հայտնաբերվել, բացակայում են հազվագյուտ էկոհամակարգերը: Ուսումնասիրության տարածքի մոտակայքում չկան բնության հատուկ պահպանվող տարածքներ, պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ, տարածքն անմիջական սահմաններ չունի ԲՀՊՏ-ների հետ:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները՝ վառելիքի հիմնական լիցքավորման և քսայուղերի փոխարինման աշխատանքները կատարվելու են հարակից բնակավայրերում՝ համապատասխան ծառայություն մատուցող կայաններում կամ «ՎԱՅՔ ՃՇՇ» ՍՊԸ-ի արտադրական տարածքում, հորատման հարթակների և մոտեցման ճանապարհների կառուցման և ռելիեֆի վերականգնման ժամանակ կիրականացվի փոշենստեցման ջրցանում, աշխատակիցների կենցաղային պայմանների ապահովման նպատակով տարածքում բեռնակղային տիպի վագոնտնակի տեղադրում, որը կօգտագործվի որպես հանդերձարան և հանգստի սենյակ, կեղտաջրերի հավաքում հորատիպ զուգարանում, որը հետագայում դատարկվելու է հատուկ ծառայության ուժերով՝ պայմանագրային հիմունքներով, կենցաղային աղբի հավաքում՝ հատուկ անթափանց տարողություններում և մոտակա աղբանոց տեղափոխում, օգտագործվող տեխնիկական միջոցների շարժիչների կարգավորում, աշխատանքների ժամանակ աղմուկի և թրթռումների վերահսկողություն: Վայրի բուսատեսակների և դրանց պոպուլյացիաների վիճակի ուսումնասիրության (տեսակային կազմ, տարածվածություն, քանակ) իրականացում, որի տվյալները սահմանված կարգով տրամադրվում են բուսական աշխարհի պահպանության,

պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում լիազորված պետական մարմնին: Տեղամասում բույսերի Կարմիր գրքում (այսուհետ՝ կարմիր գիրք) գրանցված տվյալ բուսական տեսակի նոր պոպուլյացիաների հայտնաբերման դեպքում դրանց պահպանության նպատակով նախատեսվում է՝ առանձնացնել օգտագործման նպատակով տրամադրված տարածքում պահպանվող գոտիներ, որոնք ունեն տեղական նշանակություն և անհրաժեշտ են կարմիր գրքում գրանցված բուսատեսակների՝ սույն կետում նշված նոր պոպուլյացիաների կենսունակության ապահովման նպատակով, ժամանակավորապես սահմանափակել առանձնացված պահպանվող գոտիներում տնտեսական գործունեության որոշ տեսակներ, եթե դրանք կարող են բերել նշված բուսատեսակների աճելավայրերի վիճակի վատթարացմանն ու պոպուլյացիաների կենսունակության խաթարմանը: Երկրաբանական աշխատանքների ընթացքում կենդանական աշխարհի ներկայացուցիչների կա՛մ դրանց բների կա՛մ կենսագործունեության հետքերի հայտնաբերման դեպքում կդադարեցվի աշխատանքներն ու կիրազեկվի համապատասխան կառույցներին: Շրջակա միջավայրի վրա ազդեցությունների մեղմման միջոցառումների համար նախատեսված է ծախսել 200.0 հազ. ՀՀ դրամ: Հորատման հարթակներն ու ճանապարհները կառուցելիս հանված լեռնային զանգվածը կուտակվելու է անմիջապես դրանց հարևանությամբ: Հորատման աշխատանքներն ավարտելուց և հորատահանուկը փաստագրելուց և նմուշարկելուց հետո լեռնային զանգվածով կատարվելու է ռելիեֆի վերականգնում: Ռելիեֆի վերականգնման համար ընկերությունը նախատեսում է ծախսել 160.8 հազ. ՀՀ դրամ: Երկրաբանական ուսումնասիրության ընթացքում իրականացվելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված մշտադիտարկումներ՝ մակերևութային ջրերի մոնիթորինգ՝ շաբաթը մեկ անգամ, ստորերկրյա ջրեր՝ ամսական մեկ անգամ, մթնոլորտային օդի՝ շաբաթը մեկ անգամ, հողային ծածկույթի մշտադիտարկում՝ լաբորատոր հետազոտում՝ տարեկան մեկ անգամ, չափումներ ավտոմատ սարքերով՝ ամիսը մեկ անգամ, վայրի բնության, կենսամիջավայրի, կարմիր գրքում ընդգրկված, էնդեմիկ տեսակների մոնիթորինգ՝ տարեկան մեկ անգամ: Մշտադիտարկումների իրականացման նպատակով նախատեսվում է տարեկան մասնահանել 200.0 հազար ՀՀ դրամ:

***Պատճառաբանական մաս.*** Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ գնահատման և փորձաքննության ընթացքում Վայոց ձորի մարզի Վայք համայնքի Արին և Զառիթափ բնակավայրի ղեկավարների նստավայրում իրականացվել են հանրային լսումներ: Փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ ներքին գործերի, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, կադաստրի կոմիտեից, քաղաքաշինության կոմիտեից, Վայոց ձորի մարզպետարանից, Վայքի համայնքապետարանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության մասնագիտացված ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հաշվետվության լրամշակման մեջ:

Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք կառաջանան արդյունահանման աշխատանքների իրականացման արդյունքում, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմերի սահմաններում:

## Փորձաքննական պահանջներ

1. Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման ընթացքում խստագույնս հետևել հաշվետվությունում ամրագրված բնապահպանական միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ պահպանելով բնապահպանական բոլոր նորմերը:

2. Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում առաջնորդվել Կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի N 191-Ն որոշման պահանջներով՝ իրականացնելով հաշվետվությունում ամրագրված շրջակա միջավայրի բաղադրիչների՝ հողի, օդի, ջրերի, կենսաբազմազանության մշտադիտարկումներ, արդյունքները ներառել մոնիթորինգի պլաններում:
3. Աշխատանքների իրականացման ընթացքում առաջնորդվել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի պահանջով՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:
4. Պահպանել ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:
5. Տարածքում հանդիպող բույսերի Կարմիր գրքում գրանցված տեսակների հանդիպելու դեպքում իրականացնել պահպանության համապատասխան միջոցառումներ:

## ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ՎԱՅՔԻ ՃՇՇ» ՓԲԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված Վայոց ձորի մարզի Հերհերի անդեզիտաբազալտների երևակման տեղամասի երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է պետական փորձաքննական դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝ Վարդան Հարությունյան